Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս խոշորացված համայնքի <<Արաքսի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվար /17 դասաժամ/, ֆիզկուլտուրա /26 դասաժամ/, ֆիզիկա / 11 դասաժամ/ առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ-ի մարտի 27-ից մինչև 2024թ. ապրիլի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ-ի ապրիլի 12-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Արաքս խոշորացված համայնքի <<Արաքսի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /041/ 20-27-25 հեռախոսահամարով:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

<<ԱՐԱՔՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ

Արաքս համայնք գ. Արաքս Դրոյի 6 2024թ. մարտ. 25

Էլ.հասցե `araqsimijnakarq.dproc@mail.ru

Հեռախոս ` 041-20-27-25

ՀՐԱՄԱՆ № 44-Լ

«ԱՐԱՔՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի կետով և ուսուցչի թափուր տեղի մրցույթի օրինակելի կարգի 3-րդ գլխի 16-րդ կետով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ուսումնական հաստատությունում ֆիզկուլտուրա /26 դասաժամ/, դասվար/17դասաժամ/ , ֆիզիկա / 11 դասաժամ/ առարկաների թափուր տեղի մրցույթ:
2. Հավակնորդների գործերի ընդունման պատասխանատու նշանակել Մարիամ Սահակյանին:
3. Փաստաթղթերը ընդունվում են 2024թ-ի մարտի 27-ից մինչև 2024թ-ի ապրիլի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
4. Մրցույթը տեղի կունենա 2024թ ապրիլի 12-ին ժամը 15:00-ը <<Արաքսի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում:
5. Հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տնօրեն՝ Ս. Նավասարդյան

2024թ. մարտի. 25

գ. Արաքս